

Հարցաշար
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
12-րդ դասարան Տևողությունը 180 րոպե

Ազնվության, անկեղծության մասին աշխարհում ասված ու գրված խոսքերից հսկա լեռ է գոյացել, այնինչ դրանից, ցավոք, նրանք քիչ են շահել: **Սակայն** երբևէ չեն ընկրկել. շրջելով երկրով **մեկ**՝ անխոնջ շարունակում են իրենց առաքելությունը՝ հուսալով, որ մարդիկ, բանալով հոգու փակ դռները, ներս կառնեն իրենց: Ավա՛ դ, այդպես չէ: Իսկ գիտե՛ք՝ ինչու. մարդը վախենում է, որ անաչառ լինելու դեպքում կարող է զրկվել ունեցվածքից: Եվ քանի որ շատերի համար որկորը հագեցնելու անբավ նկրտումը վեր է ամեն ինչից, անսքող անտարբերությամբ աչք են փակում զագրելի արարքների վրա՝ հանդուրժելով **անգամ** անհանդուրժելին: **Այդուհանդերձ** պատեհապաշտ փարիսեցիներն առիթը բաց չեն թողնում, որ գործի դնեն արդարությունը՝ որպես դիմակ՝ դատապարտելու, այպանելու նույնիսկ անմեղսունակներին:

Մինչդեռ ազնվությունն ու շիտակությունը բոլոր առաքիներությունների հիմքն են: Դրանք հզոր ուժ են, և խարդախներն իզուր են արհամարհում նրանց: Ազնիվ, անկեղծ հոգին անձեռակերտ տաճար է, որտեղ դողանջում է անկապտելի ճշմարտության ձայնը:

Անկեղծությունը անխառն, անսեթևեթ ադամորդուն ավելի բարձր ու արժանավոր է դարձնում մարդկանց աչքում, քան քանքարավոր հացկատակը:

Ով սովորաբար անկեղծ չէ ուրիշների հետ,....

Մեծագույն վիրավորանքը, որ կարելի է հասցնել ազնիվ մարդուն....

1. Շարունակի՛ր անավարտ մտքերը: (2 միավոր)
2. Մեկնաբանի՛ր «Ազնվության, անկեղծության մասին աշխարհում ասված ու գրված խոսքերից հսկա լեռ է գոյացել, այնինչ դրանից, ցավոք, նրանք քիչ են շահել» և «Անկեղծությունը անխառն, անսեթևեթ ադամորդուն ավելի բարձր ու արժանավոր է դարձնում մարդկանց աչքում, քան քանքարավոր հացկատակը» նախադասությունները: (2 միավոր)
3. Գրի՛ր որկոր, նկրտում, պատեհապաշտ, փարիսեցի, այպանել, անձեռակերտ, անկապտելի, անխառն, քանքարավոր, հացկատակ բառերի՝ տեքստում գործածված իմաստին համապատասխանող հոմանիշը կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Դուրս գրի՛ր տեքստում գործածված անկանոն և պակասավոր բայերը: (1 միավոր)
5. Նշի՛ր՝ տեքստում թավ գրված բառերը որ խոսքի մասերի արժեքներով են գործածված: Ուրիշ ի՞նչ խոսքիմասային պատկանելություն ունեն: (1 միավոր)
6. Գրի՛ր *Այդուհանդերձ պատեհապաշտ փարիսեցիներն առիթը բաց չեն թողնում, որ գործի դնեն արդարությունը՝ որպես դիմակ՝ դատապարտելու, այպանելու նույնիսկ անմեղսունակներին* նախադասության շարահյուսական հոմանիշը՝ նշելով ստորադաս նախադասության և դերբայական դարձվածի բնույթը: (1 միավոր)
7. Կազմի՛ր 4 նախադասություն *ծառանայ* բառի բազմիմաստություններով: (2 միավոր)
8. Կազմի՛ր մեկական բառ *առ-*, *ամենա-*, *հակ-*, *վեր-*, *տար-*, *հար-*, *փոխ-*, *բաց-*, *շար-*, *ստոր-* նախածանցներով և դրանց համանուն արմատներով: (2 միավոր)
9. Բացատրի՛ր «ոչ միայն հացիւ, այլև բանիւ» և «յո՞ երթաս» թևավոր խոսքերը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունները: (2 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Իմ սիրտը լեռներում է » վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)